

Վալերի Ա. Միրզոյան  
Փիլիսոփ. գիտ. դոկտոր

**ՄԻՄՈՆ ԶԱՎԱՐՅԱՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ  
ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ծննդյան 150-ամյակի առիթով\*

**Բանալի բառեր** - Միմոն Զավարյան, բազմազանություն, փոքրամասնություն, ապակենտրոնացում, ժողովրդավարություն, ինքնակառավարում, իշխանություն, ազատություն, համամասնակցություն, առաջադիմություն:

Միմոն Զավարյանը (1865-1913) ՀՅ Դաշնակության հիմնադիրներից է. գյուղատնտես, մանկավարժ, հրապարակախոս, եռանդուն քաղաքական գործիչ: Նրա տեսական ժառանգության մեջ մեզ համար ուշագրավ և արդիական են հանրային կյանքի սոցիալ-փիլիսոփայական լայն դիտարկումները, մասնավորապես՝ ժողովրդավարության էության և դրսևորումների հանգամանալից պարզաբանումը, պետական կառավարման համակարգի ապակենտրոնացման հիմնավորումները, տեղական ինքնակառավարման սոցիալական նշանակության շեշտադրումը, հանրային կառավարման մեջ կուսակցությունների դերակատարման վերլուծությունը:

Եթե փորձենք առանձնացնել Ս. Զավարյանի սոցիալական փիլիսոփայության մեթոդաբանական հիմքը, ապա պիտի սկսենք մարդկանց համակեցության կազմակերպման մեջ միօրինակության և բազմազանության ներդաշնակ համադրման նրա պահանջից: Այս պահանջ-դիրքորոշումը հույժ արդիական է ներկայիս գլոբալացման պայմաններում, երբ, օրինակ, մշակութային ծավալապաշտության կողմնակիցները լիովին բնական են համարում ազգամշակութային տարբերությունների աստիճանական հարթեցումը, փոքրամասնությունների լեզվի վերացումը, ազգերի ուժացումը և այլն: Որպես հակափաստարկ Զավարյանը, նախ, լուսաբանող մի օրինակ է բերում, հիշեցնում Խրիմյան Հայրիկի պատասխանը Պետերբուրգի մետրոպոլիտի այն հարցադրմանը, թե չարժե՞ն արդյոք, որ քրիստոնեական բոլոր եկեղեցիները միանան և հենց Հայաստանյազ եկեղեցին առաջինը նման քայլ կատարի: Խրիմյանը հակադրվում է անմիտ միօրինակացման այս հիմնավորմանը, բացատրում ռուս հոգևորականին, որ Քրիստոսի ուս-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 31.03.2015:

մունքը դավանող եկեղեցիները նման են տարբեր ծաղիկներից բաղկացած մի գեղեցիկ փնջի, ուստի և ծաղիկներից մեկի իսկ բացակայությունը միայն կադրատացնի փունջը: «Խրիմյանի պատասխանի մեջ կա մեծ ճշմարտություն,- ամփոփում է Ս. Զավարյանը և դրան տալիս տեսական եզրահանգման ձև,- **Բազմազանությունը** առաջադիմության հատկանիշներն և միևնույն ժամանակ ազդակներն են մեկն է, եթե կարելի է ըսել՝ կյանքի նպատակն է»<sup>1</sup>:

Այս դիրքերից է պաշտպանում Ս. Զավարյանն ազգային փոքրամասնությունների իրավունքները և, ամենից առաջ, հայոց լեզվի շահերը: «Ան արդի սերունդի ամենաթանկագին ժառանգությունն է, թողված մեր նախնիքներն: Ան մեր հոգիին, մեր արյան ամենավիրական մասն է, որ պահելու ենք մեր ամբողջ ուժովը»<sup>2</sup>: Դա վերաբերում է բոլոր ազգերի լեզվին, մշակույթին, հավատքին, ինքնությանը: Բազում են օրինակները, թե ինչպես են իշխող խավերը ճնշում հասարակության մյուս խավերին, գերակշռող ազգային տարրը՝ նսեմացնում փոքրամասնությանը, պետական լեզվի գերիշխանությամբ՝ սահմանափակում ազգային համայնքների մշակութային իրավունքները: Միաժամանակ՝ Զավարյանն արձանագրում է նաև հարազատ լեզվի համար պայքարի օրինակներ, ազգային զարթոնքի դրսևորումներ, սեփական մշակույթի շուրջ համախմբում: Ուստի նրա համար աներկբա է շիտակ ժողովրդավարության կարևոր պայմաններից մեկը. «Ինչպես անցյալին մեջ՝ կրոնները, սեփական լեզուն՝ ազգերու համար տեսակ մը սրբություն է այսօր, ամեն մեկ ազգության անկապտելի իրավունքը, որ ազատ է ըլլալու որևէ ճնշումե»<sup>3</sup>:

Հիշատակելով ազգային ճնշման բազում օրինակներ (Գերմանիայում, Ռուսաստանում, «հետամնաց Թուրքիայում» և այլն)՝ Զավարյանը կոչ է անում. «Չվախանաք ազգություններու բազմազանութենն, մեկ կողմ թողունք մեկը մյուսին նվազեցնելու տենչանքը՝ այս կամ այն արհեստական միջոցով»<sup>4</sup>: Ավելին, ազգային բազմազանությունը մարդկության ընդհանուր հարստությունն է, ազգերը կարող են միմյանցից սովորել: Թերևս զարմանալի չէ, որ հատկապես դարերով տարատեսակ ճնշումների ենթարկված ազգի՝ հայերի շուրթերից է ինչո՞ւմ ազգային համերաշխության, խաղաղ համակեցության լավագույն բանաձևումը. «Անհատներու նման ազգերը ևս չեն ներկայացնել կատարելության տիպար: Ամեն մեկն ունի իր թույլ, բայց և շեշտված դրական հատկանիշները: Օգտվինք փոխադարձաբար ամեն մեկ ազգի ունեցած դրական գիծերեն»<sup>5</sup>:

Ինչպես մարդիկ, այնպես էլ պետությունները, միևնույն պետության տարբեր մարքերը, բնակավայրերը մասնագիտանում են տնտեսական գործունեության տարբեր տեսակների մեջ: Հենց այս հանգամանքը նրանց հարկադրում է նաև զբաղվել ապրանքների և ծառայությունների փոխանակությամբ: Վերստին բազմազանությունը զուգադրվում է միօրինակությանը, փոխանակության ընդլայնմամբ ապահովվում է ընդհանրությունը: Նշանակում է կյանքի ընթացքն իսկ թելադրում է պետության կառավարման համակարգի ապակենտրոն և դաշնային կառուցվածքի անհրաժեշտությունը. «Եվ այսպիսով, առևտրի զարգացումը մեկ կողմն կմղե մարդկությունը միանալ և ոչնչացնել պետություններու սահմանները, մասնագիտացման զարգացումը մյուս կողմն կշեշտե ամեն մեկ ուրույն շրջանի զարգացման կարևորությունը՝ այդ շրջանին մեջ: Երկու ուղղություններու հաշտությունը կապահովվի միայն ապակենտրոնացման դաշնակցական կարգերու հաստատումով... դրություն մը, որ մեկ կողմն կապահովե տեղական ինքնուրույն արտադրությունն ու ստեղծագործությունը, մյուս կողմն ալ կբանա անսահման ասպարեզ՝ սերտ ու ազատ հաղորդակցության համար»<sup>6</sup>:

1 Ս. Զավարյան, Ապակեդրոնացում // Երկեր, Եր.: Երևանի համալս. հրատ., 1991, էջ 64: Աստ և հետայսու մեջբերումներում բնդգծումը Ս. Զավարյանինն է:

2 Անդ, էջ 63:

3 Անդ:

4 Անդ, էջ 65:

5 Անդ:

6 Անդ, էջ 59:

Այս դատողություններից հետո միանգամայն համոզիչ է Ս. Զավարյանի ամփոփիչ բանաձևը. «**Բազմազանությունը, ինքնուրույն ազատ զարգացումը՝ փոխադարձ սերտ հարաբերություններու հետ՝** անհրաժեշտ պայման է յուրաքանչյուր երկրի առաջադիմության համար»<sup>7</sup>:

Նման աշխարհայացքային դիրքորոշմամբ՝ ինքնին հասկանալի է, որ բուն պետության կառուցվածքի, տարածական կազմակերպման, պետաքաղաքական ռեժիմի բնութագրման համար չեն կարող լինել համապարտադիր կաղապարներ. «Ես հեռու եմ այն կարծիքեն, թե պետական կազմի համար կրնա գոյություն ունենալ ընդհանուր դրություն մը, որ հարմարեք բոլոր ժամանակներուն և բոլոր երկրներուն: Յուրաքանչյուր երկրի աշխարհագրական դիրքը, հասարակության տնտեսական կազմի ձևը, ազգաբնակչության մտավոր զարգացման աստիճանը ու ազգություններու փոխադարձ հարաբերությունները կազդեն և կ'այայնանավորեն այս կամ այն հասարակական կազմակերպության ձևը»<sup>8</sup>: Հետևաբար, հնարավոր չէ, մեկ երկրում իրեն արդարացրած կազմակերպության ձևը ինքնաբերաբար գործադրել այլ երկրում:

Միօրինակության և բազմազանության հարաբերակցությունը հանրային կյանքի կառավարման, պետության քաղաքականության տեսակետից վերածվում է **մեծամասնության և փոքրամասնության փոխհարաբերությունների** կարգավորման հիմնախնդրի սոցիալ-փիլիսոփայական դիտարկման: Հայտնի է, որ XVII–XVIII դարերի հանրային դաշինքի տեսաբանները ինչպես բուն պետության ծագման, այնպես էլ դրա ամբողջականության պահպանման և միասնական գործառույթյան մեջ վճռորոշ էին համարում ժողովրդի մեծամասնության կամքը: Շատ հստակ է ժողովրդավարության այդ սկզբունքը ձևակերպված **Ջոն Լոկի** աշխատություններում՝ «մեծամասնությունը իրավունք ունի վճռելու և գործելու մյուսների փոխարեն», «մեծամասնության գործողությունը հարկ է ընդունել որպես ամբողջի գործողություն»<sup>9</sup>: Դրա մասին Ս. Զավարյանն այսպես է արտահայտվում. «Ֆրանսիական Մեծ Հեղափոխությունը վերջնականապես խորտակեց «ազնվաշունքներու» ի ծնե վայելած իրավունքները: Մարդկային անհատներու **հավասարությունը**, մտքի և խղճի ազատությունը իբր հիմք ընդունվեցան նոր աշխարհայացքի, և ժողովրդի իշխանությունը՝ իբրև միջոց նոր քաղաքական կազմի»<sup>10</sup>: Այս հարցում, այդուհանդերձ, հայ մտածողն ունի որոշակի վերապահում. «Թագակիրները տապալելով և անհատի հավասարությունը հռչակելով, նոր ուղղությունը անտես ըրավ, որ **մեծամասնության իշխանությունը** (որով կարտահայտվի ժողովրդի կամքը) չապահովեր մանր համախմբումներու իրավունքները: Մեծամասնության իրավունքը շատ դեպքերու մեջ ի չարը գործ կդրվի»<sup>11</sup>:

Մեծամասնության և փոքրամասնության հարաբերակցության մասին Զավարյանի մտորումները չեն սահմանափակվում միայն փոքրամասնության իրավունքները հարգելով, դիցուք, օրենսդրական մարմնում նրանց ներկայացուցիչներին տեղ հատկացնելով, թեպետ այսկերպ, իհարկե, «կթուլան ազգային հողի վրա ծագում առնող անախորժ և նույնիսկ վտանգավոր բարդություններն ու ընդհարումները»<sup>12</sup>: Խնդիրն ավելի ընդհանրական բնույթ ունի. մեծամասնության իշխանությունը ամենուր, լինի կառավարում, թե գիտություն, հակված է պահպանողականության, այսինքն՝ կամա թե ակամա «կստեղծվի նոր ձևի պատնեշ մը առաջադիմության դեմ»<sup>13</sup>: «Եվ, ընդհակառակն, գյուտերի նման, նոր մտքերն ալ առաջ կգան առանձին անհատներե: **Նոր** գաղափարները, **ճշմարտության ավելի բարձր** ըմբռնումները կյուրացվին նախ և առաջ այս կամ այն **նեղ** շրջա-

7 Ս. Զավարյան, Ապակեդրոնացում, էջ 72:

8 Անդ., էջ 25:

9 Локк Дж. Два трактата о правлении // Соч. в 3-х томах, т. 1, М., 1988, с. 317, 318:

10 Ս. Զավարյան, Ապակեդրոնացում, էջ 54–55:

11 Անդ., էջ 55:

12 Անդ., էջ 57:

13 Անդ., էջ 55:

նակին կողմն, կկազմեն **փոքրամասնության** սեփականություն»<sup>14</sup>:

Ուրեմն, փոքրամասնության իրավունքների ապահովումը, անհարկի սահմանափակումներից ազատումը ոչ միայն քաղաքական, այլև քաղաքակրթական նշանակություն է ստանում: Այս առումով շատ ուշագրավ է Զավարյանի արած կանխատեսումը ինչպես հանրային կյանքում, այնպես էլ մտավոր աշխարհի զարգացման մեջ քանակի և որակի փոխհարաբերության վերաբերյալ. «Քանակի հետ մեծ արժեք ունի նաև **որակը**: Քանակեն ավելի կգնահատվի **ինքնությունությունը**: Ապագային, երբ մարդոց նյութական պետքերը բավարարություն ստացած կըլլան, **նորի, ինքնությունության, որակի պահանջը** ավելի ևս պիտի շեշտվի, և ատ պիտի դառնա մարդկության ամենամեծ տենչը»<sup>15</sup>:

Առհասարակ, ինչ բան է **շիտակ ժողովրդավարությունը**: Արդյոք կառավարման համակարգի փոխարկումը միապետականից հանրապետականի արդեն իսկ ենթադրում է ժողովրդավարության հաստատում: Ըստ Զավարյանի՝ դա միայն առաջին քայլն է, որին պետք է հետևի հանրային կյանքի կառավարմանը հնարավորինս շատ քաղաքացիների անկաշկանդ մասնակցությունը: «Իսկական ժողովրդապետությունը չի պարունակեր իր մեջ միապետի իշխանության փոխանցումը քանի մը հարյուր ընտրյալներու: Ատ միայն առաջին քայլն է և ոչ ամենակարևոր քայլը: Ժողովրդի իշխանություն և ժողովրդական կառավարություն կըլլա այն պարագային, երբ օրենքներու քննության և հասարակական գործերու կարգադրության մասնակցին կարելի եղածին չափ շատ մարդիկ, երկրի հասուն ու կենսունակ բոլոր տարրերը»<sup>16</sup>: Իսկ դրա համար լավագույն հնարավորություն ընձեռում է հատկապես տեղական կառավարումը, ինչի հիմնավորումն էլ Ս. Զավարյանը դիտում է որպես իր փիլիսոփայության գործնական նպատակը:

Բայց մինչ տեղական կառավարման երևույթին վերաբերող նրա դատողություններին ավելի հանգամանորեն անդրադառնալը՝ ծանոթանանք նրա վերաբերմունքին Շարլ-Լուի Մոնտեսքյոյի, հատկապես վերջինիս «Օրենքների ոգին» աշխատության հանդեպ: «Ֆրանսիացի հայտնի հանճարը», «մեծ ֆրանսիացին», ինչպես նրան մեծարում է Զավարյանը, բացատրում էր ժողովրդավարական Անգլիայի առավելությունը բռնապետական Ֆրանսիայի հանդեպ երկու գործոնով. առաջինն այն է, որ վարչական կարգի հիմքում ոչ թե միապետի, այլ ժողովրդի կամքն է, երկրորդը՝ պետական իշխանության ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների փաստացի անկախությունը միմյանցից<sup>17</sup>: Այս երկու պայմանի շեշտադրումը՝ ժողովրդի կամքի օրենսդրական արտահայտումը և իշխանության ճյուղերի միմյանց հսկելու, հավասարակշռելու հնարավորությունը Զավարյանը գնահատում է որպես «անհերքելի ճշմարտություն»: Այդուհանդերձ, նկատում է նա, Ֆրանսիացի փիլիսոփան անտեսել է մի կարևոր հանգամանք՝ բրիտանական համայնքներին բնորոշ ազատությունը իրենց ներքին ինքնավարության հարցերում. հենց այդ լայն ինքնավարությունն է «Անգլիո ազատության հիմնաքարը»<sup>18</sup>:

Ս. Զավարյանի համար այս կապը ռազմավարական նշանակության դրույթ է. «Ամեն տեղ **երկրի ազատության աստիճանը կապված է տեղական ինքնավարության աստիճանին**»<sup>19</sup>: Եվ որքան ավելի լայն է քաղաքացիների մասնակցությունը, այնքան ավելի ժողովրդավարական (ռամկավարական) կարող է համարվել տվյալ պետությունը: «Բնամկավար երկիրներու մեջ **չկա քաղաքացի,**

14 Անդ, էջ 55-56: Ուշագրավ է Միքայել Վարանդյանի դիտարկումը. «Որքան ալ կը սիրւր ժողովուրդը, որքան ալ սրտով նիրւած լինէր զանգւածներու դատին, իր ջերմ ու խորունկ համակրանքը գիտակից անհատներու կողմն էր. խիզախ, ձեռներկնց, վճռական, արի փոքրամասնութեան կողմը: Զավարեանի ըմբռնումով այդ անհատներն են, որ կը նիւթեն համաշխարհային պատմութիւնը, քարշիլով իրենց ետևէն կոպիտ, յետամնաց, ստույ պ անգիտակից, զանգւածը»: Տևս Մ. Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992, էջ 92:

15 Ս. Զավարյան, Ապակեղոռնացում, էջ 65:  
16 Անդ, էջ 34:  
17 Տևս **Монтескьё III**. О духе законов // Избранные произведения. М.: Политиздат, 1955, էջ 290-300:  
18 Ս. Զավարյան, Ապակեղոռնացում, էջ 33:  
19 Անդ:

որ այս կամ այն չափով ներգործական դեր չխաղա համայնքի կամ որևէ ընկերության գործերուն մեջ»<sup>20</sup>:

Միայն ժողովրդավարական կառավարման պայմաններում է հնարավոր բացահայտել և լիովին գործադրել հասարակության բոլոր անդամների կարողությունները: Այս դրույթով ժամանակին Ջոն Լոկը հիմնավորում էր հանրապետական կարգերի առավելությունը՝ հակառակ Թոմաս Հոբսի հիմնավորած բացարձակ միապետական կառավարման<sup>21</sup>: Միննույն փաստարկն ենք գտնում Ս. Զավարյանի հիմնավորումներում. «Ամեն մեկ երկրի համար էն կարևորը, ամենամեծ հարստությունը ինքը՝ ժողովուրդն է, մարդիկն են: Եթե մարդիկ տգետ են ու նախապաշարված, եթե անոնք աշխատասեր և ճարտար չեն արհեստներու մեջ կամ չունին **նախաձեռնության ոգի**, ընդունակ չեն **ինքնագործունեության**, պետությունը այդ պարագային չի կրնար լուսավոր, հարուստ և կենսունակ ըլլալ»<sup>22</sup>:

Մարդիկ ամենամեծ հարստությունն են. եթե այս ասույթը թարգմանենք ժամանակակից լեզվի, ապա ստանում ենք «մարդկային կապիտալի» էության խորունկ մի բնութագրում: Հիրավի, որքա՞ն արդիական է հնչում Զավարյանի պատկերավոր (թեպետ, անշուշտ, ափսոսանքով արված) համեմատությունը. «Շնորհիվ իր ավելի բարձր կրթության, արհեստական հմտության ու ճարպկության, ինչպես և՛ նախաձեռնության ոգիին, միջակ ավստրիացի մը իր տնտեսական-հասարակական կարողություններով երկու հայ կարժե, իսկ մեկ ամերիկացի՝ երկու ավստրիացի և չորս հայ»<sup>23</sup>:

Գործնական առումով Ս. Զավարյանի դատողությունների մեջ կարող ենք առանձնացնել հանրային կյանքի ապակենտրոն կառավարման համակարգի կարևորության մի քանի հիմնավորում:

**Ա. Տեղական խնդիրներն ավելի հիմնավոր և արդյունավետ են կարգավորվում:** Տեղերում, բնականաբար, առավել տեղյակ են սեփական հոգսերից, ունակ են հստակեցնելու տնտեսական և կազմակերպական առաջնահերթությունները: Այստեղ հարկավոր է հաշվի առնել նաև Զավարյանի արձանագրած «չգրված օրենքների» դերը. նկատի ունի այն, որ գրառված, իրավական, համապետական օրենքները տեղերում կիրառություն են ստանում՝ բեկվելով այդտեղ իշխող բարոյական պատկերացումների, ավանդույթների, մշակութային առանձնահատկությունների ոսպնյակով:

Անցյալի աշխարհակալ տերությունների փլուզման պատճառներից մեկն էլ կառավարման գերկենտրոնացումն է եղել, երբ կենտրոնական իշխանությունը չի վստահում ծայրամասերին և ձգտում է ամեն ինչ իր ձեռքում պահել: Եվ, հասկանալի է, որքան էլ կենտրոնի պաշտոնյաները բարեխիղճ և աշխատասեր լինեն, նրանց առջև ծառայած է կառավարելիության ապահովման խնդիրը, այսինքն՝ նրանք պարզապես չեն կարող ընդգրկել կառավարման օբյեկտը լիովին, խորամուխ լինել տեղական տարատեսակ առանձնահատկությունների մեջ: Արդյունավետ կառավարմանը խոչընդոտող այս հանգամանքին Զավարյանը հավելում է ևս մեկը. «Տեղական պայմանները չճանչցող, տեղացի ազգաբնակչության հետ չկապված դրսեցի պաշտոնյաները ավելի իրենց մեծերուն հաճոյանալու մասին կխորհին, քան թե երկրի բարգավաճմանը»<sup>24</sup>:

**Բ. Կենտրոնական կառավարության գործունեությունը զգալիորեն բեռնաթափվում է:** Կառավարման համապետական մարմինները ավելի շատ ժամանակ են ստանում զբաղվելու ընդհանուր նշանակության խնդիրների կարգավորմամբ: Մինչդեռ կառավարման գերկենտրոնացման հետևանքով անարդյունավետ աշխատանք է կատարվում: Զավարյանը նման աշխատանքի մի քանի օրինակ է բերում. այսպես, Ռուսաստանի առաջին գումարման Պետական դուման որպես անհետաձգելի խնդիր քննարկում է Դորպատի համալսարանի լվացարանի կա-

20 Անդ., էջ 36:

21 Տե՛ս **Локк Дж.** Два трактата о правлении, նշվ. աշխ., էջ 312-313:

22 **Ս. Զավարյան**, Ապակենտրոնացում, էջ 35:

23 Անդ., էջ 35:

24 Անդ., էջ 27:

ուցման օրենքը<sup>25</sup>: Նույն էր Թուրքիայի պարագայում, որտեղ տեղական նշանակության ամենաչնչին հարցն անգամ պարտադիր պետք է կարգավորվեր միայն վերին ատյանների կամքով: Ի հակադրություն այդօրինակ անարդյունավետ կառավարման՝ Ջավարյանը ընթերցողի ուշադրությունն է հրավիրում Ավստրիայի համապետական կառույցների գործունեությանը, Շվեյցարիայի տեղական ինքնակառավարման համակարգին, ԱՄՆ-ի նահանգների ինքնուրույնությանը:

**Գ. Անհատը և ամբողջ հասարակությունը տոգորվում են քաղաքացիականության առողջ զգացումով:** Տեղական ինքնակառավարմանը մասնակցելով՝ անհատը գիտակցում է նաև հանրային ընդհանուր խնդիրների առկայությունը, պատրաստակամություն է դրսևորում նպաստելու դրանց լուծմանը, բացի դրանից՝ նույն այդ անհատը ձգտում է ամեն կերպ օժանդակելու համամասնակցության մշակույթի ամրապնդմանը. Ջավարյանի տված բանաձևով՝ «անհատի քաղաքացիական առողջ զարգացումը, ազատությունն ու ժողովրդապետության պաշտպանությունը»<sup>26</sup>:

Հարկավոր է նկատել, որ այս հարցում Ջավարյանը նուրբ դիտարկում է կատարել հանրային զանազան խավերի քաղաքական վարքագծի դրսևորումների մասին: Նրա համոզմամբ՝ միայն տեղական ինքնակառավարմանը հանրության ամենալայն շերտերի զանգվածաբար մասնակցությունն է երաշխիքը ժողովրդավարական արժեքներին անմնացորդ նվիրվելու: Այլ պարագայում առկա իշխանությունը վիճարկող ընդդիմադիր ուժը հակված է լինում սոսկ փոխարինելու նախորդին՝ նույնիսկ դավաճանելով հանրության շահերը: «Ով որ կուզե սահմանադրություն հայտարարելով պահել արդի բյուրոկրատիզմը (պաշտոնյաներու իշխանությունը), ան հույս պիտի դնե միայն կրթված ու «ազատական» միջակ տարրերու, այսինքն հասարակության շատ նեղ շերտի մը վրա, որը այնքա՛ն տենչեր ունի լավ պաշտոններ գրավելու և պառլամենտի անդամ ընտրվելու, բայց անկարող է իր կրծքով պաշտպանել ազատությունները»<sup>27</sup>:

**Դ. Հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության ընդլայնումը համատարած նախաձեռնողականություն և մրցակցություն է ապահովում:** Տեղական և համապետական հարցերի քննարկմանը և խնդիրների լուծմանը քաղաքացիների մասնակցության ընդլայնումը, իսկապես, բացառիկ նշանակություն ունի. չէ՞ որ «անհատական նախաձեռնությունը ոչ մեկ բանով այնքան չի խրախուսվիր, որչափ տեղական ինքնավարությամբ»<sup>28</sup>: Իսկ հարևան համայնքների միջև մրցակցությունը կարող է նպաստավոր լինել տվյալ համայնքներում, ուրեմն և ամբողջ պետության մեջ սոցիալ-տնտեսական խնդիրների արդյունավետ լուծմանը. «Ինձ կթվի նույնիսկ, որ այն մրցակցությունը, որ կա դրացի գյուղերու կամ քաղաքներու, օրինակ՝ Ժնևի և Լոզանի միջև, մրցակցություն, որ հիմնված է կատարյալ հավասարության վրա, դատապարտելի չէ, այլ՝ ընդհակառակը: Թող ամեն մեկը աշխատի պարծենալ, որ իր հայրենի գյուղի, շրջանի դպրոցները, ճանապարհները, բարքերը, օրենսդրությունը ավելի լավ և ավելի առաջադեմ են դրացիին ունեցածներն»<sup>29</sup>:

**Ե. Հզորանում է միասնական հայրենիքի, ընդհանուր պետականության զգացումը:** Այս դրույթը Ջավարյանը հիմնավորում է, ընտանիքի հետ համեմատությամբ. «Եվ ինչպես ընտանեկան սերը լայնալով կվերածվի ազգային սիրո և հետո համամարդկային, այնպես այ առողջ պետական հայրենասիրությունը կրնա առաջ գալ միայն քայլ առ քայլ, տեղական հայրենասիրության աստիճանական զարգացումով»<sup>30</sup>:

Ժողովրդավարության ապահովման մյուս հիմնախնդիրը իշխանության չա-

25 ՏՆ անդ, 1, ք 29:

26 Անդ, 1, ք 41:

27 Անդ, 1, ք 34:

28 Անդ, 1, ք 35-36:

29 Անդ, 1, ք 39:

30 Անդ, 1, ք 37:

**րաշահման վտանգը** հնարավորինս չեզոքացնելն է: Զավարյանի համար աներկբա ճշմարտություն է այն, որ իշխանությունն ինքնին ծավալապաշտական նկրտումներ ունի, ուստի և նրա առջև պատենշ պիտի դրվի. «Մենաշնորհը ամեն բանի մեջ վատ է և վտանգավոր, մանավանդ երկիր կառավարելու գործին մեջ»<sup>31</sup>: Մենաշնորհյալ, հակազդեցություն չունեցող իշխանությունը անխուսափելիորեն այլասերում է իշխանություն կրողներին. այս եզրակացությանն է գալիս Ս. Զավարյանը. «Ղեկավար անհատներու և խմբակցություններու **բարի կամքն** ու տրամադրությունը բավական չեն՝ զերծ պահելու համար զանոնք բռնություններն ու զեղծումներն: Ամենաբարի և ամենեն ազնիվ մարդն իսկ **իշխանությունը** ձեռք առնելով, իրերու բերմամբ իսկ տրամադիր է դառնալ բռնակալ, եթե իր գործերուն մեջ չի քննադատվիր, չի զսպվիր ու չի սանձահարվիր: Հսկողությունը, քննադատությունը, **ընդդիմությունը** հասարակական գործունեության, ինչպես և խորհրդարանի մեջ անհրաժեշտ պայմաններ են շիտակ, օրինական, առաջադեմ ընթացքի»<sup>32</sup>:

Իշխանության չարաշահումն արգելող, հանրային կյանքում ներդաշնակության վերականգնման ազդու միջոցներից են պարբերաբար անցկացվող տարբեր մակարդակի ընտրությունները: Միմոն Զավարյանը ընտրական պայքարը գնահատում է որպես հանրային կյանքի առումով շատ օգտակար երևույթ. կուսակցությունները իրենց ծրագրերն են հրապարակում՝ «ցուցնելու նոր ճամփաներ՝ երկրին առաջադիմության համար», «կբարձրանա հասարակության հետաքրքրությունը, ժողովուրդը կդաստիարակվի, երկիրը կհասուննա քաղաքականապես»<sup>33</sup>: Սակայն հաճախ արդեն իշխող կուսակցությունները ամեն ինչ անում են լոկ վերարտադրվելու համար. «Քաղաքական տհասությունը և ժողովրդի հետամնացությունը ամեն տեղ կապահովեն և կհամապատասխանեն իշխողներու ուժին և ազդեցության»<sup>34</sup>: Սեփական հանրային կյանքը կարգավորելու անտարբերությունը նկատի ունենալով՝ Զավարյանը դառնությամբ է խոսում հայոց քաղաքական վարքագծի մասին. «Որչափ անգլիացին (միջին տիպարի անգլիացին) մարդ է և քաղաքացի (ազատ, քննադատող, ինքնուրույն ու համբերատար), նույնչափ մենք վախկոտ ենք, ծածկամիտ, անգույն, անհամբերատար, միշտ տրամադիր ըլլալու բռնակալ կամ ստրուկ, նայելով բախտի բերումին»<sup>35</sup>:

Միմոն Զավարյան մտածողի սոցիալական փիլիսոփայության առավել սեղմ շարադրանքը հանդիպում ենք Խրիմյան Հայրիկի հուղարկավորության ժամանակ նրա արտասանած ճառի մեջ: Մասնավորապես, բնութագրելով հայ մեծ կաթողիկոսի հավատո հանգանակը, Զավարյանը շարադրում է, փաստորեն, սեփական հավատամքը. «Հասարակական արդարությունը մարդկանց մեջ կիրականանա միայն այն դեպքում, երբ արտոնյալների տեղ ինքը՝ ժողովուրդը կը կառավարե իր բոլոր գործերը, երբ կյանքը կազմված կլինի այլ հիմքերի վրա, երբ կվերանան մրցումը, անսահման մասնավոր սեփականության իրավունքները, երբ կուժեղանա կապը աշխատավորների մեջ, երբ կգարգանան ընկերական ձեռնարկությունները, երբ ամբողջ աշխատանքը և կյանքը հաստատված կլինի բոլոր աշխատավորների համագործակցության, ընկերվարական սկզբունքների վրա»<sup>36</sup>:

Եթե ընթերցողի մեջ առաջացավ ուտոպիականության տպավորություն, ապա որպես հակակշիռ ծանոթանանք այն նախագծին, որ Միմոն Զավարյանը պատրաստել էր (1906 թ.) Անդրկովկասի հայ գյուղերի սոցիալ-տնտեսական վիճակի հանգամանակից ուսումնասիրության համար: Նրա համար անվիճարկելի ճշմարտություն է այն, որ հանրային կյանքի վերափոխումները պետք է հենվեն իրական կյանքի համակողմանի ուսումնասիրության վրա. «Վաղւայ մեր անելիք բարեփոխությունների նկատմամբ՝ ղեկավարելով աւելի առաջադէմ երկիրների մշակած

31 Ս. Զավարյան, Ընտրություններու շուրջ // Երկեր, Եր.: Երևանի համալս. հրատ., 1991, էջ 103:

32 Անդ., էջ 102 - 103:

33 Անդ., էջ 100:

34 Անդ., էջ 101:

35 Անդ., էջ 104:

36 Ս. Զավարյան, Դամբանական ճառ Խրիմյանի դագաղի վրա // Երկեր, Եր., 1991, էջ 148:

հայեցակէտներով, մենք, այնուամենայնիւ, յենած կը լինենք մեր իրական կեանքի պահանջների վրայ, կ'ունենանք անհրաժեշտ չափով թեր մեր առաջ դրած կօնկրէտ հարցերին պատասխանելու համար»<sup>37</sup>: Ընդ որում, գյուղերի վիճակի, գյուղական ընտանիքների կազմի, բյուջեի ձևավորման և ծախսերի վերաբերյալ իր հարցարաններն առաջարկելով, Զավարյանը մեթոդապես կողմնորոշում է հետազոտողներին՝ հորդորելով խուսափել մակերեսային ընդհանրացումներից, այլ սոցիալական երևույթների բացատրության մեջ որոնել, գտնել պատճառահետևանքային կապերը և ըստ դրանց անել եզրահանգումներ. «Ուսումնասիրութիւնը չափտի ըլլայ միայն տնտեսական երևույթներու բարեխիղճ նկարագրութիւնը ոչ ալ լուսանկարչութիւնը: Հետազոտողը ջանալու է միշտ գտնել գոյութիւն ունեցող երևույթներու պատճառը, ցոյց տալ այն կապն ու փոխազդեցութիւնը որ կայ այլևայլ ձիւղաորումներու մէջ»<sup>38</sup>: Եվ նկատենք, որ Զավարյանի ուսերեն երկու հրապարակումները՝ նվիրված Երևանի նահանգի և Կարսի մարզի գյուղատնտեսության վիճակին (1899 թ.) և Ղարաբաղի տնտեսական պայմաններին ու 1906-1907 թթ. սովին<sup>39</sup>, լավագույն օրինակ կարող են ծառայել սոցիալական երևույթների պատճառների մանրակրկիտ պարզաբանման: Հումանիտար ծանաչողության ասպարեզում հատկապես արգասաբեր է պատմահամեմատական մեթոդը, ինչի մասին է Զավարյանի հետևյալ դատողությունը. «Երևույթներու ազդակները ճշտելու համար՝ քննելու է թէ ինչ փոփոխութիւններ առաջ կու գան կեանքի մէջ **ժամանակի ընթացքին**: Ներկան համեմատելու է միշտ անցեալի հետ, որպէսզի կարելի ըլլայ գուշակել, նախատեսել մօտաւոր ապագան»<sup>40</sup>:

Գիտականության պահանջի կողքին Զավարյանը շատ ուշագրավ մի նկատառում է հայտնել, որն այսօր էլ մեթոդաբանական բացառիկ նշանակություն ունի սոցիալական հետազոտություններում: Խոսքը ուսումնասիրության օբյեկտի հակադարձ ազդեցության մասին է բուն ուսումնասիրողի վրա, երբ փոխվում են վերջինիս նախնական պատկերացումներն օբյեկտի վերաբերյալ: Մեջբերենք Զավարյանի միտքն ամբողջությամբ, վստահ լինելով, որ ներկայումս Հայաստանում ծավալվող սոցիոլոգիական հետազոտություններին դա կօգնի խուսափելու երկու ծայրահեղությունից՝ մեթոդաբանական օբյեկտիվիզմից, երբ ուսումնասիրողը ուսումնասիրության սոցիալական օբյեկտը նույնացնում է բնական ստրայկտային հատկությունից զուրկ օբյեկտի հետ, և բիհեյվիորիզմի մեթոդաբանությունից, երբ ուսումնասիրողը ուսումնասիրվող օբյեկտի վարքի արտաքին դրսևորումները մեկնաբանում է ըստ սեփական ըմբռնումների. «Ոչ-պակաս գնահատելի կը լինի նիւթերի հատքումը և իրենց՝ ուսումնասիրողների անհատական տեսակետից,- նկատում է Ս. Զավարյանը և բացատրում, թե ինչու.- Համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցում հետազոտողները ոչ միայն ձեռք կը բերեն որոշ փորձառութիւն իրենց ապագայ աշխատանքների համար, այլ և կեանքի մէջ կը տեսնեն շատ բաներ, որոնց մասին առաջ երբէք չէին կասկածել, կը գտնեն բազմաթիւ կապեր ու սերտ ներդաշնակութիւն առօրեայ երևույթների ու նրանց սահմանող պատճառների մէջ: Անցնելով գիւղից-գիւղ, դիմելով հողագործից խաշնարածին, նրանք կը ճանաչեն մի քիչ մեր երկիրը, յարգանքի և ակնածութեան զգացմունքով կը լցեն դէպի այն անկիրթ գիւղացին, որը իր հոտառութեամբ ու դարերի ընթացքում ձեռք բերած փորձառությամբ՝ կարողացել է այդքան թափանցել բնութեան գաղտնիքների խորքը: Վերջապէս, մօտիկից ճանաչելով մեր ժողովուրդը, ուսումնասիրողները կ'իրացնեն մարդկային բարոյական հարստութեան մի նոր գոհար՝ կը սիրեն անկեղծ, անշահ սիրով կը սիրեն այն ժողովուրդը, որը ծնունդ ու սնունդ է տւել մեզ, որը իր կոացած ուսերի

37 Ս. Զավարյան, Նախագիծ գիւղացի ազգարնակութեան տնտեսական վիճակի ուսումնասիրութեան, Թիֆլիս, 1906, էջ 4:  
 38 Ս. Զավարյան, Ուսումնասիրութեան պլտքը և միջոցները, Կ. Պոլիս, 1913, էջ 14:  
 39 Տիւ Յավարյան С., Опыт исследования сельского хозяйства хлебобродного района Эриванской губернии и Карсской области. Тифлис, 1899; Հավարյան С., Экономические условия Карабага и голод 1906-1907 гг. Баку, 1907.  
 40 Ս. Զավարյան, Ուսումնասիրութեան պլտքը և միջոցները, նշվ. աշխ., էջ 14:



վրայ է տարել մեր կեանքի ծանրութիւնը և, չը նայած պատմական ու հասարակական դժոխային պայմանների, կարողացել է դեռ ևս իւր տխուր ու խնթօք աչքերում պահել այնքա՛ն ինքնավստահութիւն, այնքա՛ն հաւատ ու լավատեսութիւն դէպի երջանիկ և ազատ ապագան...»<sup>41</sup>:

Իր տեսական դատողությունների և եզրակացությունների հիմնավորման մեջ Ս. Զավարյանը, **կրկնում ենք**, երբեք չի կորցնում իրականության զգացողությունը, նրան ոչ մի կերպ չի կարելի որակել իբրև հանրային իրական կյանքից կտրված ուտոպիական մտածողի: Օրինակ, նրա կարծիքով՝ «Թուրքիո նման հետամնաց երկրի մը համար» ժողովրդավարական ազատությունները, տեղական ինքնակառավարման ընդլայնմամբ քաղաքացիներին ընձեռվող ինքնուրույնությունը, հետևաբար և նրանց «քաղաքացիական առողջ զարգացումը» շատ հեռու են իրականանալուց. «Ազատությունը այստեղ սաղմնային վիճակի մեջ է, և անհրաժեշտ են երկար ջանքեր, որպեսզի քմահաճույքի վրա հաստատված վարչությունը փոփոխվի ամենքին համար հավասարապես պարտավորեցուցիչ օրենքի թագավորությամբ»<sup>42</sup>:

Եվ, բնականաբար, Սիմոն Զավարյանի տեսական դատողությունները, գումարած արևմտյան որոշ պետությունների փորձի հանգամանալի դիտարկումն անխուսափելիորեն բախվում են Թուրքիայի իրողությանը, հիմք տալով զավարյանական նուրբ հեզնանքին. ««Փտած» արևմուտքին մենք կուզենք տալ նոր օրինակ մը «ազատության», ազատություն՝ առանց ժողովներու ու մամուլի ազատության, ժողովրդական գերիշխանություն՝ առանց հավասար, ընդհանուր, համեմատական և գաղտնի ընտրական սկզբունքի, կուզենք ունենալ խորհրդարանական կենդանի և արդյունավոր գործունեություն՝ առանց քննադատության, առանց ընդդիմադրության... «Սահմանադրության» պաշտպանության անունով աստիճանաբար ոչնչացնել սահմանադրության էությունը՝ ահա «արևելքի» քաղաքագետներու վերջին գյուտը»<sup>43</sup>:

Թուրքիայի ժողովրդավարական ուժերին (ոչ միայն հայերին) խոր հիասթափություն պատճառեց Իթթիհատի խոստումների սին դուրս գալը. արևմտական վերափոխումների փոխարեն կատարվեց սուկ անձանց փոփոխություն, սակայն պետական մեքենայի գործելակերպը մնաց անփոփոխ. «Խորհրդարանի մեջ մենք ունինք այսօր նույն արտոնյալ, իշխող դասակարգը, որ կկառավարեր երկիրը հին ռեժիմին ատեն»<sup>44</sup>: Զավարյանը բազում օրինակներ է բերում, թե ինչպես են թուրք պաշտոնյաները խեղաթուրում ընտրությունների սահմանված կարգը, ինչ խորամանկություններ են բանեցնում՝ հայահոծ բնակավայրերին զրկելու հայ երեսփոխան ունենալու իրավունքից, ինչպես են վերաձևակերպում ընտրատարածքները թրքաբնակ վայրերին առավելություն ապահովելու նպատակով և այլն: Ուստի Զավարյանը չի վարանում հստակ ձևակերպել իրական բարեփոխումների անհրաժեշտությունը, որոնց շնորհիվ միայն բարգավաճման ճանապարհ դուրս կգան ինչպես հայերը, այնպես էլ ողջ Թուրքիայի հասարակությունը. «Մեզի համար կասկած չկա, ամեն պարագայի տակ, թե ճահճային «անդորրությունը», գերեզմանային «լուրջությունն» ու «յավաշ-յավաշի» փիլիսոփայությունը չեն, որ կրնան փրկել մեզ: Արագ, կտրուկ, **դեմոկրատիկ** օրենքներով ու գործերով է միայն, որ վերջ կարելի է դնել մեր աղքատության ու հետամնացության՝ ապահովելով միանգամայն և մեր ազատագրությունը, մեր գոյության իրավունքը»<sup>45</sup>:

Պատահական չէ, որ 1908 թ. Սահմանադրության ընդունումից հետո, ինչպես նկատում է Ս. Զավարյանը, հայերի արտագաղթը Թուրքիայից դեպի Ամերիկա բնավ էլ չթուլացավ, այլ, ընդհակառակը, ավելի մեծ թափ հավաքեց: Զավարյանը դա արձանագրում է «Հոսանք մը և իր պատճառները» աշխատության մեջ.

41 Ս. Զավարյան, Նախագիծ գիւղացի ազգաբնակչության տնտեսական վիճակի ուսումնասիրութեան, նշվ. աշխ., էջ 4-5:

42 Ս. Զավարյան, Ապակեդրոնացում, նշվ. աշխ., էջ 32:

43 Զավարյան Ս., Ընտրություններու շուրջ, էջ 105:

44 Անդ, էջ 136:

45 Անդ, էջ 138:

վիճակագրական տվյալների հանգամանակից և սթափ վերլուծությամբ: Իհարկե, ընդունում է հեղինակը, արտագաղթ կա բոլոր երկրներից, և արտագաղթում են ոչ միայն հայերը, սակայն Թուրքիայի պես «աղքատ, տգետ, կամայական» երկրում ազգային խտրականությունը, թուրք պաշտոնյաների կամայականությունները, անարդարությունները, ծնշումը, հյուծիչ հարկազանձումը պարզապես այլ ելք չեն թողնում, այնպես որ, որքան էլ ինքնին բացասական երևույթ է հայրենիքից հեռանալը, բայց դա նաև «դրական արդյունք» է, փրկության ճանապարհ (և բառիս բուն իմաստով այդպես էլ եղավ մինչև 1915 թվականը արտագաղթածների համար): Տվյալ խնդրի կարգավորման մասին Զավարյանի ընդհանրական եզրակացությունն է. «Երբ Թուրքիո, Ռուսիո և ուրիշ հետադեմ երկիրներու մեջ պաշտոնյաներու կամայականության տեղ կհաստատովի բոլորին համար ալ հավասար պարտադիր, **կենդանի** օրենքի իշխանությունը-առանց կրոնական-ազգային հովանավորություններ վերապահելու այս կամ այն տարրին-Ամերիկա գաղթելե կդադրին այն հազարավոր հրեաները, իռլանդացիները, լեհերը, հայերը, որոնք կփախչին այսօր ազգային, կրոնական խտրություններեն և պաշտոնյաներու բռնություններեն»<sup>46</sup>:

Զավարյանի կարծիքով՝ «անհատ-հասարակություն», «ժողովուրդ-պետություն» փոխհարաբերությունների ժողովրդավարական կարգավորման բնականոն հիմքը բոլոր քաղաքացիների համար մատչելի ազատության ապահովումն է: Սեփական երկրում իրեն լիարժեք անձ զգացողը թե՛ գիտակից քաղաքացի է, թե՛ բարեխիղճ հարկատու, թե՛ համայնքի գործունյա անդամ, թե՛ եռանդուն գործավոր: Ուստի Զավարյանը ընթերցողին հանգեցնում է հետևյալ ճշմարտությանը. «Չեն հիշեր ո՛ր, բայց կարդացած են հեղինակավոր անձի մը կարծիքը, թե՛ **չնորհիվ մարդուս հոգեկան տարբեր տրամադրության**, հռոմեական շրջանին մեջ, **մեկ** ազատ արհեստավոր կամ երկրագործ, կաշխատեր ու կարտադրեր երկու **քունի** (կիսաստրուկ, կիսրար) և երեք ստրուկի չափ»<sup>47</sup>: Եվ պատճառը, հարկ է համարում բացատրել Զավարյանը, ոչ թե մկաններն են, կամ ուղեղը, այլ ազատ լինելու զգացողությունը. «Տարբերությունը միայն **եռանդին** մեջն էր, որ մարդուս ստրուկ ըլլալու պարագային մեռած է, կիսաստրուկ վիճակի մեջ՝ կիսարթուն, իսկ կատարյալ ուժ կստանա միայն անհատի ազատության պարագային»<sup>48</sup>:

Զավարյանական սույն բանաձևը, անտարակույս, կիրառելի է մեր հանրային կյանքի կազմակերպման բոլոր տեսակների պարագայում: Այսօր էլ մեր երկրում ծավալվող ժողովրդավարացման գործընթացները, քաղաքական, տնտեսական, սոցիալական, կազմակերպական տարատեսակ փոփոխությունները, որ հաճախ ի սկզբանե պարզապես հոչակվում են «բարեփոխումներ», կարող են այդ բնութագրմանն արժանանալ միայն այն պարագայում, երբ, բեկվելով հասարակության անդամների հոգեբանության ուսանյակում, նրանց մեջ իսկապես կբորբոքեն «նախաձեռնության ոգին», կտրամադրեն «ինքնագործունեության», իրական հնարավորություն կընձեռեն ազատորեն մասնակցելու անհատական և հանրային կյանքի բարեփոխումներին, իրենց գիտակցական ու շահագրգիռ համամասնակցությունը բերելու բոլոր մակարդակներում համայնքային և համապետական խնդիրների արդյունավետ լուծմանը:

**Վալերի Ա. Միրզոյան** - գիտական հետաքրքրությունները, սոցիալական փիլիսոփայություն, սոցիոլոգիա, կառավարաբանություն, ճարտասանություն, լեզվական քաղաքականություն, հայ կառավարչական մտքի պատմություն:

Գիտական հրապարակումների ընդհանուր քանակը՝ 280:

46 Ս. Զավարյան, Հոսանք մը և իր պատճառները // Երկեր, Եր., 1991, Էջ 94:

47 Անդ, Էջ 87-88:

48 Անդ, Էջ 88:

## Summary

### **SIMON ZAVARYAN ABOUT DEMOCRATIZATION ROUTES OF PUBLIC ADMINISTRATION**

On the occasion of the 150th anniversary

Valeri A. Mirzoyan

**Key words** - Simon Zavaryan, diversity, minority, decentralization, democracy, self-government, power, liberty, participation, progress

In this article, theoretical heritage of Armenian prominent public figure Simon Zavaryan (1865–1913) is discussed in the frame of social–philosophical problems of democratization of public administration. Un particular, on the conditions of contemporary globalization, that reveals not only previously unprecedented opportunities for states of mutual enrichment by the experiences of public administration, but also could lead toward serious danger of loss cultural identities, in such conditions has exceptional importance the principle developed by Zavaryan on harmonious co-ordination of diversity and uniformity in the organization and management of public life. There are some other Zavaryan’s principles of socio–political characters – provision of real democracy by having regard to the opinion of the minority, creation of social institutions for deterrence of officials at different levels, amplification of local self–government bodies, deepening citizen motivation to participate on decision process of the widest possible problems of public administration.

## Резюме

### **СИМОН ЗАВАРЯН – О ПУТЯХ ДЕМОКРАТИЗАЦИИ ПУБЛИЧНОГО УПРАВЛЕНИЯ**

К 150-летию

Валерий А. Мирзоян

**Ключевые слова** - Симон Заварян, разнообразие, меньшинство, децентрализация, демократия, самоуправление, власть, свобода, соучастие, прогресс.

В статье теоретическое наследие выдающегося общественно–политического деятеля Симона Заваряна (1865–1913) анализируется в аспекте социально–философских проблем демократизации публичного управления. В частности, в условиях нынешних процессов глобализации, которые не только открывают невиданные доселе возможности взаимообогащения разных государств управленческим опытом более развитых стран, но также и серьёзной угрозой потери собственной культурной самобытности, исключительно важна постановка С. Заваряном проблемы гармонического сочетания единообразия и разнообразности в организации и управлении общественной жизни. Социально–политический аспект той же проблемы – это разработанные Заваряном принципы обеспечения реальной демократии путём учёта мнения меньшинства, рациональной децентрализации властных структур, создания общественных институтов сдерживания попыток злоупотребления властью чиновников разных уровней, усиления роли органов самоуправления, углубления мотивации граждан к соучастию в решении возможно широкого круга проблем публичного управления.

## Summary

### **SIMON ZAVARYAN ABOUT DEMOCRATIZATION ROUTES OF PUBLIC ADMINISTRATION**

On the occasion of the 150th anniversary

Valeri A. Mirzoyan

**Key words** – Simon Zavaryan, diversity, minority, decentralization, democracy, self-government, power, liberty, participation, progress

In this article, theoretical heritage of Armenian prominent public figure Simon Zavaryan (1865–1913) is discussed in the frame of social-philosophical problems of democratization of public administration. Un particular, on the conditions of contemporary globalization, that reveals not only previously unprecedented opportunities for states of mutual enrichment by the experiences of public administration, but also could lead toward serious danger of loss cultural identities, in such conditions has exceptional importance the principle developed by Zavaryan on harmonious co-ordination of diversity and uniformity in the organization and management of public life. There are some other Zavaryan's principles of socio-political characters – provision of real democracy by having regard to the opinion of the minority, creation of social institutions for deterrence of officials at different levels, amplification of local self-government bodies, deepening citizen motivation to participate on decision process of the widest possible problems of public administration.

## Резюме

### **СИМОН ЗАВАРЯН – О ПУТЯХ ДЕМОКРАТИЗАЦИИ ПУБЛИЧНОГО УПРАВЛЕНИЯ**

К 150-летию

Валерий А. Мирзоян

**Ключевые слова** – Симон Заварян, разнообразие, меньшинство, децентрализация, демократия, самоуправление, власть, свобода, соучастие, прогресс.

В статье теоретическое наследие выдающегося общественно-политического деятеля Симона Заваряна (1865–1913) анализируется в аспекте социально-философских проблем демократизации публичного управления. В частности, в условиях нынешних процессов глобализации, которые не только открывают невиданные доселе возможности взаимообогащения разных государств управленческим опытом более развитых стран, но также и серьёзной угрозой потери собственной культурной самобытности, исключительно важна постановка С. Заваряном проблемы гармонического сочетания единообразия и разнообразности в организации и управлении общественной жизни. Социально-политический аспект той же проблемы – это разработанные Заваряном принципы обеспечения реальной демократии путём учёта мнения меньшинства, рациональной децентрализации властных структур, создания общественных институтов сдерживания попыток злоупотребления властью чиновников разных уровней, усиления роли органов самоуправления, углубления мотивации граждан к соучастию в решении возможно широкого круга проблем публичного управления.